**Արձանագրություն N 2**

Ազգային ժողովի կարիքների համար ՀՀ ԱԺ շենքի առցանց շրջայցի համակարգի ստեղծման և տեղադրման ծառայությունների ձեռքբերման նպատակով կազմակերպված ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-23/10 ծածկագրով գնման ընթացակարգի /այսուհետ նաև՝ Ընթացակարգ/ գնահատող հանձնաժողովի նիստի

27 սեպտեմբերի 2023թ.
ժամը՝ 10:00

ք. Երևան, Բաղրամյան 19

Մասնակցում էին՝

Հանձնաժողովի նախագահ՝ Վ.Թորոսյան

Հանձնաժողովի անդամներ՝ Տ.Պարսիյան, Ի.Միրզոյան, Ա.Մանուկյան, Տ.Բադալյան

Հանձնաժողովի քարտուղար՝ Հ.Սաղաթելյան

### 1. Տեղեկատվություն գնման հայտով սահմանված գնման գնի վերաբերյալ

| *Չափաբաժնի համարը* | *Չափաբաժնի անվանումը* | *Գնման հայտով սահմանված գնման գինը (ՀՀ դրամ)* |
|---|---|---|
| 1 | էլեկտրոնային տեղեկատվական ծառայություններ | 15000000 |

### 2. Տեղեկություն՝ էլեկտրոնային աճուրդի հայտերի բացման և աճուրդը սկսելու վերաբերյալ

Հայտերը բացվել են eauction.armeps.am համակարգի միջոցով /այսուհետ՝ Համակարգ/ 25.09.2023թ.-ին ժամը 10:00-ին:

էլեկտրոնային աճուրդը սկսվել է հայտերը ներկայացնելու վերջնաժամկետը լրանալուն հաջորդող աշխատանքային օրը՝ 26.09.2023 թ.-ին ժամը 10:00-ին:

### 3. Հայտեր ներկայացրած մասնակիցների փչյալները՝ անվանումը, գործունեության հասցեն, կապի միջոցը, էլ.հասցեն

| Հ/հ | Մասնակիցների անվանումները | Գործունեության հասցեն | Կապի միջոցներ | Էլ. հասցե |
|---|---|---|---|---|
| 1 | «Էլիքս» ՍՊԸ | ՀՀ, ք.Արտաշատ, Մարքսի 7Ա | +37441800014 | elxamllc@gmail.com |
| 2 | ՀԱՅՎԹԵՔ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ | ք. Երևան, Մազմանյան 4 - 53 | +374 93 66 72 55 | edgarghazaryan1990@gmail.com |
| 3 | ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ ՍՊԸ | ՀՀ, ք.Երևան 0010, Մ.Խորենացի 26ա, 5-րդ հարկ | +374 55 56 40 05 | lxtech20@gmail.com |
| 4 | ԴՈՆԵՌ ՍՊԸ | ք.Երևան Գայի 51/5 | 098815666 | donernorq@yandex.ru |

### 4. Տեղեկություններ հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից հիմնավորումներ ներկայացվելու վերաբերյալ

ՀՀ ԱԺ ԷԱՃԾՁԲ-23/10 ծածկագրով ընթացակարգի հրավերով սահմանված գնման առարկաների բնութագրերի՝ «Գնումների մասին» օրենքով նախատեսված մրցակցության ապահովման և խտրականության բացառման պահանջների տեսանկյունից գնահատող հանձնաժողովի քարտուղարին հիմնավորումներ չեն ներկայացվել:

### 5. Տեղեկատվություն հրավերի վերաբերյալ հարցումների և պատասխանների մասին

Հրավերի վերաբերյալ հարցումներ և պատասխաններ չեն եղել

## *6.Տեղեկություն հակադարձ աճուրդի արդյունքների վերաբերյալ*

| Հ/Հ | Մասնակիցներ | Նախնական առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Վերջին առաջարկ /ՀՀ դրամ/ | | | Մասնակցի կարգավիճակ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | Արժեք | ԱԱՀ | Գին | Արժեք | ԱԱՀ | Գին | |
| 1 | Էլիքս ՍՊԸ | 14996000 | 0 % | 14996000 | 7400000 | 0 % | 7400000.00 | |
| | ՀԱՅՎԹԵՔ ՍՈԼՈՒՇՆՍ ՍՊԸ | 14900000 | 0 % | 14900000 | 9489000 | 0 % | 9489000.00 | |
| | ԱՅ ԻՔՍ-ԹԵՔ ՍՊԸ | 12500000 | 20 % | 15000000 | 10000000 | 20 % | 12000000.00 | |
| | ԴՈՆԵՌ ՍՊԸ | 24999999 | 20 % | 29999998.8 | 24999999 | 20 % | 29999998.80 | Մերժված |

Աճուրդն ամփոփվել 26.09.2023 թվականին: Ընթացակարգի 1-ին չափաբաժնով առաջին տեղ զբաղեցրած մասնակից Համակարգի կողմից համարվել է «Էլիքս» ՍՊԸ-ն:

### *7. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթերի, ինչպես նաև eauction.armeps.am համակարգում մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիր/ ուսումնասիրման նպատակով հանձնաժողովի նիստը հետաձգելու վերաբերյալ*

27.09.2023թ. ժամը 10:00-ին կայացած նիստում Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի ուսումնասիրման նպատակով նիստը հետաձգել և հաջորդ նիստ հրավիրել 02.10.2023թ.-ի ժամը 10.00-ին:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝ 0:*

### *8. Տվյալներ՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակցի կողմից ներկայացված հայտի՝ /հայտում առկա փաստաթղթեր/ հրավերով սահմանված պայմաններին համապատասխան կազմված լինելու և հայտի գնահատման վերաբերյալ*

02.10.2023թ.-ի ժամը 10.00-ին կայացած նիստում, Հանձնաժողովն ուսումնասիրելով eauction.armeps.am համակարգի կողմից առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Էլիքս» ՍՊԸ -ի կողմից ներկայացրած հայտը /հայտում առկա փաստաթղթեր/, արձանագրեց՝

Հայտում առկա են հրավերով պահանջվող բոլոր փաստաթղթերը և դրանք կազմված են հրավերով սահմանված պայմաններին համապատասխան:

Հանձնաժողովը որոշեց՝ առաջին տեղ զբաղեցրած մասնակից՝ «Էլիքս» ՍՊԸ-ի հայտը գնահատել բավարար:

*Ընդունվել է որոշում կողմ՝ 5, դեմ՝0:*

### *9. Տվյալներ՝ ընտրված մասնակցի և մերժված հայտի, պայմանագիր կնքելու մասին որոշման, անգործության ժամկետի, պայմանագրի կնքման վերաբերյալ*

02.10.2023 թ.-ին Հանձնաժողովը որոշեց՝

9.1 Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի թիվ 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ «Էլիքս» ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից, իսկ Ընթացակարգի մյուս մասնակիցների հայտերը մերժել:

9.2 Հաստատել պայմանագիր կնքելու մասին որոշման հայտարարության տեքստը:

9.3 Անգործության ժամկետ է սահմանվում պայմանագիր կնքելու որոշման մասին հայտարարությունը հրապարակվելու օրվան հաջորդող օրվանից մինչև 10-րդ օրացուցային օրը ներառյալ ընկած ժամանակահատվածը:

9.4 Գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջներով ընտրված մասնակցի հետ կնքել պայմանագիր:

*Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 5, դեմ՝ 0*

Հանձնաժողովի

| | | |
|---|---|---|
| Նախագահ՝ | | Վարդան Թորոսյան |
| անդամներ՝ | | Տիգրան Պարսիկյան |
| | | Ինեսսա Միրզոյան |
| | | Արմենակ Մանուկյան |
| | | Տիգրան Բադալյան |
| քարտուղար՝ | | Հերմինե Սաղաթելյան |